## 16. ՔՈՉԱՐ

Կէլնի չէլնի մեյ խատ թակավոր:

Էսա թակավորուն կէլնի իրեք խատ լաճ:

Ավուր մեկ էսա թակավոր կմտածէ, կասի՝ ես խալիվորցեյ իմ զաթի. իմ ոտ մեկ կյերեզման ի, ես որ մեռնեմ, զիզնից սորա վո՞վ պիտի դնեմ իմ տեղ, իմ լաճերուց ո՞րն ի խելացի, չեմ կիտե:

Ի՞նչ կանդար որ կմտածի, ճար չի կանա կընդնէ:

Կկանչի մեկ օր ուր նազր-վազրներ բիթյուն, ժողով կանէն:

Էսա նազր-վազրներն էլ չեն կանա խելք խասուցե: Մենակ էսա կնանդար կասեն.
- Թակավոր ապրած կենաս, իտոր ճար մենակ էսա ի. պիտի էլնես քո իրեք լաճերացն էլ էորեռխկես ուրիշ քյաղաքյ, թող էրթնն, տեսնանք խենքյ որն շատ փառքն կվնստակի. կպիրի, էն գյնխ բիթյունից խելացին ի:

Թակավորն ի, որ էսա պնն կլսի, կասի. - Աղորթմանց, որ շատ խորոտ խելք ի:

Մեկ օր կկանչի ուր իրեքյ լաճերաց, ՚նր էօթեն, բիթյուն նազր-վնզրներուց առաջ կխանի էսա լաճերաց էրկու խարիրական ոսկի կուտա. կասի. - Կիտեք. պալա՛ն. ի՞նչ կա, - կասի, - ես գյեռ կտեսնաքյ իմ ճնլ, ես խալիվորցեր եմ, իմ մեկ ոտ գյեռ կյերեզման ի, ես կուզիմ իմ մեռնելուց առաջ ծե մեկիդ տնեմ իմ տեղ, որ էսա երկիր կառավարի, իտոր խամար էլ ես ի՞նչ կիտեմ ծեզնից ո՞րն ի խելացի, որ ինոր տնեմ իմ տեղ, իտոր խամար ծե կուտամ զմեն մեկիտ էրկու խարրական ոսկի. էտա էրկու խարիր ոսկին տԽւքյ պիտի առնեքյ էրթաքյ ուրիշ երկիր չյուր մեկ տարի, մեյ տարուց սորա, տնռնաքյ էլմ էլ գյնխ մոտ զիկ: Էնգյնխ տեսնամ խենքյ վո՞վ ի շատ փարա վաստկե: Վով որ շատ փարա վաստկե, էն բիթյունից խելացի յի, էնգյնխ ինոր պիտի տնեմ իմ տեղ, - կթամխի ուր տղեյներաց, կասի, - Դե՛, էլե՛ք կնացեքյ:

Էսա իրեքյ լաճերն ի, կառնեն էրկու խարրական ոսկի, կէլնեն կինեն ճննպնխ, կէրթնն մէ մեկ-մեկ քյաղաքյ, ՚նաման իռնքյն էլ ուրենց մեջ խնպնր կուտան. որ մեկ տարուց սորա կյնն այսինչ տեղ, մեյ մեկելու աչկեն, նոր մեյտեղվեն. նոր էրթնն ուրենց խոր մոտ:

Ծոչ լաճն ի, կէրթա տեխ ևրևելքյ՝ Արևելու քյաղաքյ:

Էօրթնաշի ախպեր կէրթն տեխ կըպլեն, էն յանի քյաղաքյ:

Պստիկ ախպերն էլ կէրթն տեխ արևմտու կողմ՝ Արևմտու քյաղաքյ:

Ծոչ ախպերն ի կէրթն Արևելու քյաղաքյ, էն էրկու խարիր ոսկի փառքն ունի. պակա՞ս փառքն յի, էտա տեղ մեյ խատ ճոչ դյուգյննմ կպանա, կբաշլայի առտուր

անել: Ընկուն էլ թմախցյար կապրի: Չյուր մեյ տարվան մեջ էտա էրկու խարիր ոսկին կանի խինցյ խարիր ոսկի:

Էօրթա̈նչի ախպերն ի, որ կնացե տեխ կըպլեն: Կէրթա̈ քյաղքյի մեչ մեկ շապաթմ էրկու կփոա, չյիր պա̈ն կընցնի, վա̈րճաըլ էնա լաճն էլ կէրթա̈ մեյ խաստ խորոտ դյուգյա̈նմ կկնտնի, էտա էրկու խարիր ոսկով չյուր մեյ տարի էս էլ կանի չյուր խինցյ խարիր ոսկի:

Էնա լաճն էլ ուր ճոչ ախպոր պես շատ քըծեփ կապրի, խաց պանրով իտա̈րա̈ կանի:

Պստիկ ախպերն ի, կէրթա̈ Արևմտու քյաղաքյ, կէրթա̈ մեյ խաստ խորոտ տունմ կգյրի կնստի, նա̈՛ պանեղ, նա̈՛ զա̈տ: Չյուր մեյ տարի կուտի, կխմի, քյեռֆ կանի, ընկուն որ եփ մեյ տարին կթմըմի, էտա էրկու խարիր ոսկուց չեռպ կմնա իրեք խարիր կուռուշ:

Էնա պստիկ լաճն ի, իսկի չի մտածե, որ կընացե խորս մոտ, խերս ի՞նչ պիտի ասե, ճեչ պա̈ն չի մտածե: Կուտի, կխմի, կփոա: Խետ տարին կթմըմի, կիրիշկա, որ ջեռպ մընացե իրեքյ խարիր կուռուշ, էտա էլ յա ուր թա̈լի ուրենց տուն, յա՝ չթա̈լի:

Տարին որ կթմըմի էնա իրեք ախպերները էլ կելնեն ուրենց էլա̈ծ-չէլա̈ծ կծախեն, որ էրթա̈ն ուրենց տուն:

Ճոչ ախպերն ի, որ դյուգյա̈ն-տա̈զգյա̈խ էլա̈ծ-չէլա̈ծ կծախի, որ բիթյուն կպռնի էփեջա̈ փա̈րա̈, չյուր վեց խարիր ոսկի, կանի գյա̈մա̈ր կկապի մեջք, կինի ճա̈նպա̈խ կուգյա̈, կուգյա̈ կխասնի ուրենց ասած տեխ կնստի: Ըն տեխ էն մեկել ախպերներաց կաչկի, կտեսնա որ ինոնք ալա̈ չեն իկե:

Էօրթա̈նչի ախպերն էլ կէլնի ուր էլա̈ծ-չէլա̈ծ կծախի, ուր դյուգյա̈ն-տազգյախ, էս էլ կանի փա̈րա̈, կկապի մեջք, կինի ճա̈նպա̈խ: Կուգյա̈ ուրենց ասած տեխ, կտեսնա, որ ճոչ ախպեր իկե նստե էտա տեղ իտոնց կաչկի, էտա էլ կնստի էտա տեխ էրկսով պստիկ ախպոր կաչկեն:

Կմնա պստիկ ախպեր:

Էնա լաճն ի, ի՞նչ ունի որ ծախի, զա̈տ չունի, էլա̈ծ-չէլա̈ծ իրեքյ խարիր կուռուշն ի, որ էն էլ ճիսունն՝ կերե. մնացե՝ էրկու խարիր ճիսուն: Էնա էլ կինի ճա̈նպա̈խ կուգյա̈:

Էնա լաճու ճա̈նպա̈խ կյերեզմընդերաց մեչ կենի, կուգյա̈ էտա կյերեզմընդերաց մեչնեն. ըր կընցնի կտեսնա, որ իրեքյ խաստ մարթ մեյ խաստ թա̈զա̈ մեռել խաներ ին, ուրենց ծեռն էլ զմեն մեկին մեյ խաստ խաստ չոմախմ կա, որ աստված ա̈զա̈տի, թա̈փեր ին վեր էնա մեռըլին կտփեն:

Էնա լաճն ի, կմոտոխասնա էնա մարթերաց, կտեսնա, որ ինչ կխանեն էնա մեռըլի գյլեոխ: Կասի. - Ախպե՛ր, ախպե՛ր, ի՞նչ կանեքյ, ախր մեղքյ ի. էտա մեռել ի՞նչխ եք խանե. կտփեք, մեռըլից ի՞նչ կխասկընաքյ, - կուգյա̈, կմոտոխասնա կասի. - ասեքյ, տեսնամ խենքյ ի՞նչ ի պաճառ. որ տյուքյ իտոր կտփեքյ:

Էնա մարթերն ի կասեն. - Կիտե՞ս ինչի կտփենք, ինոր տեխն ի: Էնա մարթ որ կեր, քանի սաղ էր, զիկ ճիսուն կուռուշ տալիքյ ուներ, որ մեռավ, կնացի կընգյա̈ն մոտ ասաց՝ ես չեմ խառովի վի՛ր եքյ տվե, կնացեքյ ինորից առեքյ: Կնա̈ցինքյ ախպերներաց, ինոնքյ էլ էնա խա̈պա̈ր ասին մե:

Ըն մեկել մարթն էլ կասի. - Զիկ էլ ճիսուն կուռուշ պարտքյ էր, որ մեռավ. կնացի կընգյա̈ն, ախպերներաց մոտ, ասի՝ գյեռ ծեր լուսա̈խոգյի մարթ, ախպե՛ր, զիկ տալիքյ ի, տվե՛քյ: Ասին՝ վի՛րն ես տվե, կնա̈ ինորից առ, զիկ էլ ըռա̈տ արին:

Էն մեկել մարթն էլ կասի. - Ջիկ հիսուն կուռուշ ի տալիքյ. էլմ էլ կնացի կընգյան. ախպերներաց մոտ չճանչցան, ասին՝ վի՛րն եքյ տվե, կնուցեքյ ինորից առեքյ: Մենք էլ որ տեսանքյ, որ ընկընայի, առեցինքյ էսա փետեր. էկանքյ սեր ավքյար էսա մարթուց խանինքյ, չէ՛ խո չէ՛:

Էսա լաճնի ի, կասի. - Կացնեքյ, ծե պա̈ն կասեմ. - կասի. - ծեր առնելիքյներ ի՞նչ կանդար ի:

Էսա մարթերն ի կասեն՝ հիսունական կուռուշ:

Էսա լաճն ի, կխանի իռնց հիսունական կուռուշն կուտա. կասի. - Դե՛, կնա̈ցեքյ:

Էսա մարթերն ի, կառնեն ուրենց փարեն, կէրթան խետ ուրենց պանին:

Լաճն ի կէրթա̈ տերտեր պան կկանչի կպիրի, նոր էսա մեռըլին թազա խորել կուտա. կընցնի կէրթա: Խարիր կուռուշն էլ վեր իտոր ծախքյ մասարիվք կանի. ջեռպ էլ խարչլիկ չի մնա, կտառտկվի քիս-քթյուն. կինի ճա̈նպա̈խ. ինքյ ուր կասի՝ շայնում. էս էլ մեյ պա̈ն էր, խո քյե ա̈զա̈տեցի:

Էսա լաճն ի, կուգյա̈, կուգյա̈ կխասնի ուր ախպերներաց, որ տեղ որ խոսկ են տվե մեյ մեկելու, կուգյա̈ կտիսնա, որ ճոչ ինա̈ն էօրթանջի ախպերներ նստեր ին ու կաչկին: Կուգյա̈ պա̈րիվ, աստծու պա̈րին կասի, կնստի:

Իրեք ախպերներն ին կնստին. ուրենց մեչ խա̈պա̈ր կուտան, էն ինոր կասի՝ տյու ի՞նչ ես վա̈ստկե, էն ինոր կասի տյու ի՞նչ ես վա̈ստկե:

Ճոչ ախպերն ի կասի. - Գյեռ ես վեց խարիր ոսկի եմ վա̈ստկե, տյուքյ ի՞նչ եքյ վա̈ստկե:

Էօրթանջի ախպերն էլ կասի. - Ես էլ գյեռ վեց խարիր ոսկի եմ վա̈ստկե:

- Տու քյա՞նի ոսկի ես վա̈ստկե, - կտառնան պստիկ ախպոր կասեն:

Պստիկ ախպերն ի կասի. - Վալլա ես զա̈տ չեմ վա̈ստկե, թո՛ղ վա̈ստկեղ, ես ա̈լա̈ էրկու խարիր ոսկին էլ կերա, նոր տա̈ռգա եռ, մկա մեյ փա̈րա̈ ել որ զա̈նեքյ մա̈նգյա̈նեն չկա:

Վա̈րհասըլ կելնեն կինեն ճա̈նպա̈խ կէրթա̈ն. կէրթա̈ն կխասնեն ուրենց տուն: Թակավորն ի, որ կլսի ուր լաճեր էկան, խա̈պա̈ր կեորեոխկի ուր նա̈զր-վա̈զրներաց, որ գյա̈ն տեսնան խենքյ վով շատ փա̈րա̈ ի վա̈ստկե, որ ինոր անենքյ թակավոր:

Նա̈զր-վա̈զրներ քիթյուն կժողովդեն կուգյա̈ն, կկանչեն էսա լաճեր, կխառցուցեն մեյ մեկ, թե ի՞նչ եք վա̈ստկե:

Ճոչ լաճն ի կխանի կյա̈մա̈ր, կառցկի մեչկից, կտնի ուր խոր ա̈ռա̈ճ:

Թակավորն ի կպա̈նա̈ կյա̈մա̈ր. կտեսնա, որ մեչ վեց խարիր ոսկի կա, կասի. - Ա̈ֆա̈րիմ, իմ լաճ տեսա՞ր ապա էրկու խարիր ոսկին մեկ տարվան մեչ արաց վեց խարիր ոսկի:

Ճոչ լաճն ի, գյլեոխ կուտա̈ կէրթա կկայնի էնտեխ, ուր խելքով կասի՝ գյեռ ես պիտի էլնեմ թակավոր:

Կկանչեն էօրթանջի լաճուն:

Էսա լաճն ի, էս էլ ինոր պես մեչկից կառցկի կյա̈մար, կտանի թակավորի ա̈ռա̈ճ, կասի. - Թակավոր ապրած կենաս, էսա զորով կառցա վա̈ստկե:

Թակավորն ի, կպա̈նա̈ կյա̈մա̈ր, կտեսնա մեչ իլին ոսկի, կխամբրի. կտեսնա որ էսա էլ վեց խարիր ոսկի ի, կասի. - Ապրե՛ս, պալամ, տյուն էլ խորոտ ես վա̈ստկե, տյուն էլ քի ճոչ ախպոր գյեորա ես վա̈ստկե:

Կկանչեն պստիկ լաճուն:

Պստիկ լաճն ի կուգյա. ի՞նչ կա շեռպ՝ զատ չկա. ի՞նչ պիտի ասի՝ էրկու խարիր ոսկին էլ կիրե, մկա էն էրկու խարիր ոսկին մներ. էն էլ պա̈ն էր, էն էլ՝ չկա:

Թակավորն ի. կասի. - Անպաճառ, էսա լաճ շատ վաստկած կէղնի, չանգ էն մե կելներ:

Կկանչի, կասի. - Արե՛, պալա՛մ. տյու ի՞նչ կսնդար ես վա̈ստկե խենքյ:

Լաճն ի կուգյա կկայնի թակավորի առաճ. կասի. - Թակավոր ապրած կենաս, ես քո տված էրկու խարիր ոսկին էլ եմ կիրե:

Թակավորն ի կասի. - Պալա՛մ, ես ծե ի՞նչ ասի. ես ծե ասի, որ էրթա̈քյ փա̈րա̈ վաստկեքյ, տեսնամ խենքյ ո՛րտ շատ վա̈ստկեքյ՝ էն անեմ թակավոր:

Պստիկ լաճն ի կասի. - Թակավոր ապրած կենաս, ես մտածեցի, տեսա, որ ես թակավորի տղա եմ. ի՞նչխ կէլնի, որ ես էրթամ պա̈ն անեմ. ես զիկ չկերիցուցի. իտոր խամար նա̈՛ պսւնա, նու՛ զա̈տ, քյո տված էրկու խարիր ոսկին կերա, պա̈մ էլ վերեն տրի, ֆռացի, տառցա էկա, ես փա̈րա̈ վա̈ստկելու մտկով չեմ կընա̈ցե:

Թակավոր իլան էսա նա̈զր-վա̈զրներն ի կտեսնան, որ էսա լաճ փա̈րա̈ չի վա̈ստկել, պա̈մ էլ տրե վերեն, ինոր կթողնեն պաց:

Էն մեկել էրկսի վերեն ժողով կանեն, թե որն էլնի, որն չէլնի, վա̈րճւսըլ ուրենց մեչ կասեն. - Քանի որ էսա էրկու ախպերն էլ էրկուսն էլ ճավասար են փա̈րա̈ վաստկե, պիտի նոր պան ասենքյ, թե որ կառցան՝ զաթի նոր էնգյա̈խ կասենք:

Թակավորն ի կտիսնա, որ ո̈ղորթմա̈նց էրկու ախպերն էլ ճավասար են փա̈րա̈ վա̈ստկե, ինոր տա թակավորութեն՝ չէլնե, էն մեկելին տա՝ չէլնե:

Լաճերն ի կանչկին. կասին՝ էն գյեռ կասի՝ զիկ կուտան, էն մեկել գյեռ կասի՝ զիկ կուտան:

Թակավորն ի, կտառնա լաճերաց կասի. - Պալա՛մ, մկա կընացեք, ինչ գյախ, որ ծե կկանչեմ, նոր էնգյախ իկեք:

Էսա լաճերն ի, կէլնեն փեռր-փեռշման կէրթա̈ն ուրենց տեղ:

Նա̈զր-վա̈զրներն ի կէրթա̈ն տուն, կմտածեն, էն մեկել օր կուգյան մոտ թակավոր, կասեն. - Թակավոր ապրած կենաս. մենքյ էսա կիշեր մեյ պա̈ն մտածեցինքյ:

Թակավորն ի կասի. - Ի՞նչ եք մտածե:

Նա̈զր-վա̈զրներն ի կասեն. - Թակավոր ապրած կենաս, մեր երկիր արփշում շատ կա, մեր երկրի արփշում Չին-Մաչինա քյաղաքյ շատ գյին կանի. պերենքյ նոր պա̈ն անեաքյ, պերենքյ քանի որ էսա երկու ախպերն էլ ճավասար են փա̈րա̈ վա̈ստկե, չես կանա մեկուն տնե քյու տեղ, իտոր խամար, մենքյ մտածեցինքյ որ քո լաճերաց բերենքյ զմեն մեկին տանքյ իրեքյ պեռ արփշում, էտա արփշում տանեն Չին-Մաչինա քյաղաքյ, էնտեղ շատ կընցնի, խետ իրեքյ պեռ կա̈յվի փոխեն, որ որ կառցավ փոխեր էն զմենից խելա̈ցին ի, էն պստիկ լաճուն էլ կասենքյ, էճ վո՞վ կիտի, պա̈լքյի խելքյ իկե գլեռխ, էն էլ թող էրթա̈. տեսնանքյ խենքյ վով կանա պերե:

Թակավորն ի կասի. - Խա՛, էտա շատ խորոտ խելքյ է:

Թակավորն ի կկանչի ուր իրեքյ լաճերաց էլմ էլ կասի. - Պալամնե՛ր. էն որ կնա̈ցեքյ, էն՝ չէլա̈վ, ինոր խամար որ տյուքյ էրկուսդ էլ ճավասար փա̈րա̈ եքյ վա̈ստկե, ծե ո՛րուտ անիմ թակավոր: Մըկա էլ ուրիշ պա̈ն պիտի անեմ, մեր երկիր արփշում շատ կա, էսա արփշում Չին-Մաչինա քյաղաքյ շատ տեղ ունի, ծե զմեն մեկիտ իրեքյ պեռ կուտամ, պիտի տանեքյ էտա Չին-Մաչինա քյաղաքյ, թե որ կարցաքյ փոխեքյ խետ իրեքյ պեռ կա̈յվի՝ զաթի էն թակավորացուն է:

Մոչ լաճն ի էտ որ կլսի. հասան կէլնի ուր բեգյիրներ կպերի կպառնա. կուտա ուր խալայեղին. էլ իսկի չի աչկե. համան կինի ճճնպճխ. կէրթճ. էսա թակավորութե՛ն ի. խոսկով չէլնե:

Էօրթանչի լաճն ի. էն էլ շուտ համան կկանչի ուր ծառան. կպերի ուր բեգյիրներ կուտա պճռնալ. էսա լաճն էլ խետ կպճռնա մեկին էլմ էլ չի աչկի. կինի ճճնպճխ. էսա էլ կէրթճ:

Մոչ ինճն էօրթճնչի ախպերներ. էրկուսն էլ մեյտրա կպառնան կինեն ճճնպճխ:

Ինչ կճնդւսր որ իսանքյ կէրթճն, համան թակավոր իսոնց էլմ էլ ասե, որ պիտի տըսնըխինգյ ամսուց գյաքյ անպաճառ էն էլ մեյտրճ:

Էսա պստիկ ախպերն ի. կառնի ուր իրեքյ պեռ արփշում. կդնի տուն. ինքյ ուր կասի՝ ես պիտի ինեմ ըստեխ. էնտեխ մեյ խաստ խորոտ հավատարիմ ծառամ պիտի կնտընեմ. պերեմ. թե չէ՝ ես էսասկընա չեմ կանա էրթա:

Էսա լաճն ի. կէլնի կինի տյուս, ըստեխ էնտեխ կէրթճ շուկեն կտեսնա, որ էն թճրճֆից մեյ խաստ մարթ գյեռ ծեռ դրե վեր ոռին թըրռո՛-թըրռո՛ կուգյճ: Լաճն ի, որ կտեսնա, կմոտոխասնա էտա մարթուն, կասի. - Ախպե՛ր, չե՞ս ի գյճ մոտ զիկ մշակ:

Էսա մարթն ի կասի. - Ի՞նչի չէ, ես եկեր իմ զաթի էսա քյաղաքյ, որ պան անիմ:

Լաճն ի կառնի կպերի տուն, կասի՝ էս ճլճ մեյ խաստ էսա լաճուն պիտի փորձեմ տեսնամ, խենքյ աղորթմճնց խորոտ ի, թե՝ չէ:

Կպերի տուն, կասի. - Այ մարթ, առ էսա մեյ մճջիտիյեն, կնճ շուկից քիչմ սապուն առ պե ինճն կտորմ էլ կատիֆեճ, որ պերես էն մեր ճոչ պղընձով ճյուր տայցու, պե մեյ խաստ խորոտմ ծիյանքը լվա, սապոնի. տառցի էտա կատիֆեով խորոտմ չորցու. ավելով սրպի՝ որ առատուն պիտի պառնանքյ. ինենքյ ճճնպճխ. էրթճնքյ Չին-Մաչինու քյաղաքյ:

Էսա մարթն ի կասի. - Խա՛, վեր իմ աչին, էտ էլ պճ՞ն ի որ:

Լաճն ի կխանի մեկ մճջիտիյեն կուտա, կթողնի կէրթճ:

Էսա մարթն ի, կէրթճ շուկեն, կտորմ սապոն կառնի կուգյճ, կէրթճ տընեն թավեն կուզի կպերի. կտորմ ճյուր կլցի մեջ, կտայցուցի. կպերի կտնի փագյախ. կտորմ սապոն կթաթխի մեչքյ. քյճմսկ, կտորմ կսապոնի թե չէ. կառնի կատիֆեն. մեյ կտոր քյճմսկ կսրպի. սորա ավելով կտորմ էլ կււվելի սանքիմա, կուգյճ, որ աղին ասի՝ գյեռ հճզր ի:

Էսա լաճն ի, մարթուն ինչ կճնդճր որ պանի դրե, համան ինքն էլ իկե տռան ծակից կիրիշկա, խենքյ ճղորթմճնց էսա լաճ կսւնե ուր տրած պան:

Կտեսնա, որ ի՛նչ անել, ի՛նչ պճն, մեյ կտոր սապոն, թավով ճյուր տայցուցե. մե կտոր սապոն կտորմ թաթխեց մեչքյ քյսեց, չքյսեց վեր ծիյու քյճմկին, կատիֆեն առեց վեր ծիյու քյճմկին, էն էլած սապոն էլ սրպեց, տառցավ ավելով կտորմ սրպեց, իթող պճց: Խետ որ կտեսնա էսա լաճ էսա պան. կասի՝ չէ՛ էսա մարթ հավատարիմ ծառա չի կանա էլնե, ինոր ճճմխու կտնի. կասի. - Կնա՛, լճզմ չես զիկ:

Էտա որ կըսկընճ, կընցնի ուր ախպերներ էփեջճ ճճնպճխ առեր են չյուր մկա:

Էն մեկել օր էլմ էլ էսա լաճ կէրթճ շուկեն, կասի. - Խենք՛յ. չե՞մ կանա մեյ խաստ խորոտ մշակմ կնտընե պիրե: Կէրթճ ճանպախ, ըռաստ կուգյճ մեյ խաստ

մարթում. կտեսնա, որ մարթ պետ մարթմ ի, պեղերն էլ էրկեն. ինքն էլ ալանա-սալանա կէրթա էն գյլեոխ, կուգյա էսա գյլեոխ:

Էսա լաճն ի, գյիրիշմիշ չէլնե, որ էրթա էսա մարթուն. ի՞նչխ ասե. ինչխ չանե. կէրթա կմոտոխասնա էսա մարթուն:

Էսա մարթն ի, կտառնա կիրիշկա էսա լաճուն, կտեսնա որ ուր շատ թա̈յմեն կանի. - Ի՞նչ կասես զիկ, - կխառցուցի:

Էսա լաճն ի կասի. - Զիկ խամմար մեյ խատ հավատարիմ մշակ լազմ ի. չեմ կիտե վով կա ընկուն մարթ:

Էսա մարթն ի կասի. - Ես գյա̈մ. կուզե՞ս. ես էկեր եմ էսա քյաղաքյ. թա̈զա̈ եմ. գործ կուզեմ, թե որ կուզես, ես կուգյա̈մ, ես էսա քյաղքյից չեմ. ես ուրիշ քյաղքյից եմ:

Էսա լաճն ի զաթի կուզեր, որ էտա մարթն էլներ. կասի. - Թե որ կուզես. արե քյե խորոտ հա̈ղ կուտամ, համան քյե մեյ պան խառցուցեմ, տյու, ամոթ չէլնե խառցուցել, տյու քյրաչութեն կիտե՞ս:

Մարթն ի կասի. - Զաթի իմ սա̈նա̈հա̈թ առաճ էլ քյրա̈չութեն էր, կուգյա̈մ, ի՞նչխ չեմ իգյա̈:

Լաճն ի կասի. - Քո անուն ի՞նչ ի:

Էսա մարթն ի կասի. - Իմ անուն Քոչար ի, քյե ծառա:

Լաճն ի կտեսնա, որ խորոտ կոթըզգյա̈ն մարթ ի. կասի. - Քյե էրկու ոսկի էլ ամսական կուտամ:

Մարթն ի կուրախնա, վեր-վեր կթռնի, որ կլսի էրկու ոսկու անուն, կասի. - Աղա ջան, քյո ջան անուշ մնա:

Թակավորի լաճն ի, կբա̈րիշի խետ, կպռծնի, ինքյ ուր կսի՝ մեյ խատ էլ ա̈լա̈ իսոր պիտի փորցեմ, տեսնամ խենքյ էսա ի՞նչ մարթ ի:

Լաճն ի կասի. - Քոչա՛ր, առ էսա մեկ մա̈ջիտիյեն, կնա̈ շուկից քիչմ սապոն առ արէ, կնա̈ տնից ճոչ կազան պե, ճյուր տայցու, մեյ խատ ծիյանքյ խորոտմ սապոնով լվա̈, սորա կատիփով չորցու. ավելով էլ ջան խորոտմ քյոթի, որ վա̈ղ պիտի պա̈ռնանքյ էնա իրեքյ պետներ, էրթա̈նքյ Չին-Մաչինու քյաղաքյ, իմ ախպերներ էսա էլա̈վ էրկու օր ի կնացեր ին, պիտի էրթա̈նքյ խասնենքյ:

Էսա մարթն ի կասի. - Աղա՛, վեր իմ գյլխուն:

Մա̈ջիտիյեն կառնի կվա̈զի շուկեն, մեկ ճոչ կտորմ սապոն կառնի, կուգյա̈ տուն: Կէրթա̈ տնից էրկու խատ ճոչ կազան կառնի, կուգյա̈. ճԽտ կլցնի, կտնի վեր օճխին, խորոտմ կտայցուցի: Կէլնի ուր խալվներ կխանի. մենակ շապիք-տոնով կմնա, թիվքյեր կչլտի, կբա̈շլայի ծիյուն սապոնել, ընկուն կսապոնի, որ ծիյանքյ կանի սատա սիվտակ փոփուռ, սորա կպերի էտա տաք ճրով խորոտմ ուր ուզածով կլվա̈, կտա̈ռնա կատիփով խորոտմ էլ կչորցուցի. կտա̈ռնա ավելով ծիյայհտերաց ջաներ խորոտմ կքյոթի, կթեմրի. կէլնի ուր խալվներ կխայնի, ծիյա̈նքյ կքա̈շի տյուս, կպա̈ռնես, կինի ճա̈նպա̈խ կէրթա̈:

Էսա լաճն ի. փայխի տռան ծակից էլմ էլ կիրիշկեր, կասեր՝ խենքյ էսա մարթն ինչխ ի: Կտեսնա որ ա̈ղորթմա̈նց էսա մարթ կտրիճ մարթ ի. առանց ուր ասելուն զմեն պա̈ն արաց, հա̈մ տա էլ ծիյանքյ պա̈ռցավ, ինկա̈վ ճա̈նպա̈խ, կասի՝ այ գյեռ ես էսասկընա մարթ կուզեմ, էսա մարթ իմ պա̈ն ի. շատ խորոտ կուգյա̈:

Լաճն ի կտեսնա, որ ինգյա̈վ ճա̈նպա̈խ էսա մարթ, կպռռա, կկայնցուցի. կասի. - Քոչա՛ր, կայնի, կայնի տեռ՞ր կէրթա̈ս, էսասկընա̈ ա̈լ-ա̈չա̈լա̈, չէ ես քյե ասի կմնանքյ առատուն կէրթա̈նքյ:

Քոչարն ի կասի. - Աղա՛, էն որ պիտի էրթա̈նքյ՝ մկա ենքյ կնացե. առատուն անք կնացե. մեյ պան ի. էլ ի՞նչխ մկա չենքյ էրթա:

Լաճն ի. որ կտեսնա Քոչարի կեյրա̈թ. կասի. - Աղեկ. Քոչա՛ր. կտորմ ա̈ռա̈ճա̈ցի. ես կուգյամ կխասնեմ:

Քոչարն ի. ուշիկ-ուշիկ կքշի չյո̈ւր որ աղեն գյա̈ խասնի:

Լաճն ի կէրթա տուն թակավորին. ինոնց կաց պա̈րև կանի, կէլնի կինի ճա̈նպա̈խ. կէրթա̈. կէրթա̈ կխասնի կես ճա̈նպա̈խ:

Կէրթա̈ն, կէրթա̈ն չյուր ճա̈մխու կես. կխասնեն ուրենց ախպերներաց. կինեն մեյղրւս. կէրթա̈ն:

Քոչարն ի ա̈ռաճվնե ուր աղին ասե. - Աղա՛. որ կինենքյ ճա̈նպա̈խ տյու էլ իմ պա̈նի վերեն պիտի չզրուցես, ես ի՞նչ որ կանեմ՝ կանեմ, գյեշ-աղեկ. էլմ էլ տյու իմ աղեն ես. համաւն ճա̈նպա̈խ որ մեյտրւս կէրթա̈նք զիկ պիտի լսես, որ լսես զաթի կինեմ խե քյե կուգյա̈մ. որ չէ՝ մկավե զիկ ասա, ես կտա̈րնամ ետ, չեմ իգյա:

Էսա թակավորի լաճն ի կտեսնա, որ Քոչար ա̈ղորթմա̈նց ուր պւանին մուխյութ ի, կասի. - Աղե՛կ, Քոչար. էլ քյո պւանին չեմ խառվե, ինչ որ կուզես, ըսկուն արա:

Վա̈րհասըլ շատ կէրթա̈ն. քիչ կէրթա̈ն, աստված մենակ կիտի, կէրթան-կէրթա̈ն. կխասնեն մեյ խատ տեղմ, որ ճա̈նպա̈խ կպա̈ժնվի. կէլնի իրեք: Էտա ճամխի վերեն մեյ խատ խարիր տարեկան խալիվոր փետ պռնե ծեռ, կայնե էտա ճա̈մխիյտերաց օրթեն:

Կէրթա̈ն էսա իրեքյ ախպերներ, պարեով կուտա̈ն էսա խալիվորին. կասին. - Բա̈բե՛ռ, տյու չե՞ս կիտե, Չին-Մաչու քյաղաքյ որ ճա̈մխով կէրթա̈ն. էսա իրեքյ ո՞րն է:

Խալիվորն ի. որ կտեսնա իսոնց կասի. - Աստծու պա̈րին, - կասի, - տյուքյ ո՛ր տեխից կուգյաքյ. ո՞ր տեխ կէրթա̈քյ, էտանքան ի՞նչ պետ են, որտե՞խ կտանեքյ:

Էսա իրեքյ ախպերներն ին, կասեն. - Բաբե՛ռ, մեր պեռներ բիթյուն արփշում ին, պիտի տանենքյ Չին-Մաչու քյաղաքյ, էնտեխ խետ կա̈յվի փոխենքյ. տեսնանքյ խենքյ կանանքյ, մկա տյու էն ասա մե. ո՞րնի Չին-Մաչու քյաղքյի ճւնպա̈խ:

Էսա պառավն ի կասի. - Չին-Մաչու քյաղաքյի ճա̈նպա̈խ էսա իրեքյ ճա̈նպա̈խն էղի:

Էսա թակավորի լաճերն ի կասեն. - Որ բիթյուն էլ կէրթա̈ Չին-Մաչու քյաղաքյ, ապա ինչի՞ իրեքյ ճա̈նպա̈խ ի:

Էսա խալիվորն ի կասի. - Էսա մեկ ճա̈նպա̈խ որ կա՝ մեյ տարի կխասնի: Էսա մեկ ճա̈նպա̈խն էլ որ կա՝ վեց ամսուց սորա կխասնի, համաւն էսա մեկել ճա̈նպա̈խ որ կա՝ իրեքյ ամսուց կխասնի: Հա̈մմա̈ն տյու, որ զիկ կլսեքյ. էսա մեյ տա̈րվա̈ն ճա̈նպա̈խ կընացեքյ. էն ճա̈նպա̈խ զմենից աղեյն ի:

Էսա լաճերն ի կխառցուցեն, կասեն. - Ի՞նչխ էն ճա̈նպա̈խ բիթյունից աղեյն ի. էն որ էրկեն ի:

Էսա խալիվորն ի կասի. - Կիտեքյ ի՞նչ կա. էսա մեյ տարվա ճա̈նպա̈խ՝ ոսկի տիր վեր գյլխուտ. կընա. ըսկուն, որ ապահով ի, մարթ մարթու չոռ չի կանա ասե: Իսա ճա̈նպա̈խ, որ կա. վեց ամիս կէրթա̈. էն էլ էն կա̈նդար. կէրթա̈ն մարթ համաւն քիչ կէրթա̈ն, էն ըսկուն ապահով չի, ինչ որ էսա մեյ տարվան ճա̈նպա̈խ: Հա̈մմա̈ն էսա իրեքյ ամսվան ճւնպա̈խ, ես էսա քյառսուն տարի ի. որ էսա տեղ կայներ իմ. ա̈լա̈ չյուր մկա էտա̈ ճա̈մփով նա̈՛ մարթ ի կնա̈ցե, նա̈՛ մարթ ի իկե, - կասի, - որ էրթա̈ցող էլե. հա̈մմա̈ն տյուս չիկե. մնացե կես ճա̈մխին: Ինքան ես ծե կասեմ,

տüքյ կիտեքյ, ո՛ր կուզեքյ էն տեխից կնստեքյ. զիկ էսա պանի խամար ին կայնցուցե էսա տեխ, էսա քյառսուն տարի:

Ճոչ ախպերն ի կասի. - Ախպերնե՛ր, մենքյ ի՞նչ ւպան ունենքյ. էն անվեր-վերի ջառդի ճամխներ, մենքյ էսա ճամխով կէրթանքյ. ջայնամ քիչմ անգյöն կխասնինքյ, համան ապահով կխասնենքյ:

Կասի ուր պեռներաց գյլեոխ կտատցուցի էն յան, օրթանջի ախպերն էլ՝ ըսկուն:

Պստիկ ախպոր քյրաջին կտեսնա, որ ինոնքյ ուրենց պեռներ տառցուցին էտա մեյ տարով ճöնպöխ: Ինքն էլ ուր պեռներաց գյլեոխ կտառցուցի էտա իրեքյ ամսվան ճանպախ, կբաշլայի քշել:

Էսա լաճն ի, որ կտեսնա ուր ախպերներ կէրթöն ապահով ճöմխից, համան ուր Քոչար քշեց տողրի իրեքյ ամսվան ճանպախ, կպոռա. կասի. - Քոչա՛ր, կայնի, կայնի, մի էրթö öլö քշի արե էսա ճամխով:

Չյուր ինքյ կէրթա, որ պիտի ուր տավրներ տառցուցի. զաթի ուր ախպերներ ճöնպöխ կկտրեն էփեյի:

Լաճն ի կուգյö Քոչարի մոտ, կասի. - Ախր տու ի՞նչ կանես, տüւ մե կտանես էսա ճöնպöխ կուրիսես, չե՞ս տիսնա ինչ կասի էսա խալվոր:

Քոչարն ի կասի. - Աղա՛, ես քյե էնգյöխ, իփ ծեր տնեն էլանքյ տյուս. ասի՝ էլ քյե խոսք չի խասնե, տյու էլմ էլ իմ աղեն ես, հöմմն զիկ պիտի լսես, թե որ չէ՝ ես չեմ գյա քյո խետ, տյուն էլ ասիր՝ խա. մկա ի՞նչ կասես, իկեր ես, կուզես, որ տյու քյո ախպերներաց խետ կուզես էրթöլ, կնö ինոնց խետ, ես էլ էսա ճöմխով կուգյամ քյաղաքյ, մեյ մեկելու կկնտնինքյ, ես դողրին կասեմ, էսա կառճ ճöնպöխ չեմ թողնի գյö էտա էրկեն ճամխով էրթö:

Լաճն ի կտöռնա ետ, կէրթö ուր ախպերներաց խետ կէրթö զինքյ, հöմմն պեռներ թողեց Քոչարի մոտ, որ էնտեխից էրթö, էրթöն քյաղաքյ մեյ մեկելու կըետնեն:

Լուա ճոչ ախպերներն ի կկպնին էսա պստիկ ախպոր յախեն կասին. - Տո՛, քյո տուն չավիրի, տյու մունջ ի՞նչխ քյո կöնդöրöկöն պեռ տվիր էտա անծանոթ, անճարակ մարթուն, առեց կնաց. ախր տյու ծուռ ես, յա՛ ՝կնա պեռներդ տառցու ետ, թող գյա մեյտրö կէրթöնքյ. յա՛ չէ՝ կնö խետ պեռներացդ, անխելքյ մ՝ելնե՛, մունջ տա ուրիշի ծեռ, սորա տանի պոծնի, նոր ինես ջուխտ ծեռնով գյլեոխդ տփես:

Էսա պստիկ լաճն ի, կտիսնա, որ öղորթմöնց ինքյ մունջ ինչխ էլöվ էտա պեռներ իտուր էտա անտես, անճանաչ մարթուն, նոր կինի փառկան, կէլնի ուր ախպերներաց մոտից կպöժվի կուգյö էսա մեկ էլ ճöմխով կինի կէրթö չյուր ուր Քոչարի կխասնի, կասի. - Ջայնս՛մ, կէրթöմ էսա ճöմխով, յա՛ Քոչարի ծեռնով կինեմ խոր, յա՛ ինոր ծեռնով զիկ աղեյ պöն կէլնի:

Կէրթö խետ Քոչարին, կինի ճöնպöխ կէրթöն: Ծատ կէրթöն, քիչ կէրթöն, աստված կիտի ինչ կöնդöր կէրթöն, կէրթöն իրիկվöն կողմ կխասնեն մեյ խատ հէրիմ մոտ:

Քոչարն ի կթöփի պեռներ էտա տեխ, խաց պöն կուտին, կպերի ուր աղին խորոտմ կծածկի, կասի. - Դե քյնի:

Աղեն ի կպառկի, կքնի: Էսա լաճն ի չյուր լուս կինի տես-տեն բայչութեն կանի, չյուր առատուն:

Առատուն ի կէլնի վեր աղեն, կլվացվի, կուգյö:

Քոչարն ի կասի. - Աղա՛, էսա կիշեր խանգյիստ քյնա՞ր:

Լաճն ի կասի. - Խա՛, Քոչար. շատ խանգյիստ քյնա: Կասես մեր տուն էյներ:

Կէլնեն պեռնէր կպառնեն կինեն ճունպախ. կէրթան. չյուր իրիկուն ախր մեյ տեխմ կխասնին:

Ճա̈մխու վերեն կիրիշկա էսա լաճ կտիսնա ի՞նչ. որտեղ որ կիրիշկա՝ սատա մարթու ջանդակ ի, մարթու գյլեոխ ի, ընկուն կա, կասես. գյլեոխ ի պյուսե:

Էսա լաճն ի, կտառնա Քոչարին կխառցուցի. կասի. - Քոչա՛ր, տյու էսա ի՞նչ տեխից պերիր մե, իսա ի՞նչ ջանտակ ի, էսա ի՞նչ գյլեոխ ի, աղորթ որ էն խալիվոր կասեր՝ էտա ճանպախ սալամաթ ճա̈նպա̈խ չի, նա սութ չէր:

Էսա Քոչարն ի կասի. - Չէ՛, աղա՛, էտասկնա չի, ես չեմ կիտե ինչ ի, էսա տեղ, որ կա մեր գյեղի գյավշան ի, ես կիտեմ ինչ կա. ինչ չկա, էսա ջանդկներ ինաւն էսա գյլխներ որ կէրևան էսա դարբար ինոնքյ մի ավատա. որ ջառդերն են արե, - կասի. - կիտես, աղա՛, իսոնքյ ի՞նչ ջա̈նդակ ին, իսոնքյ որ կան՝ մեր գյեղացիքյն ին ընցած օրեր կովան մեյմէկելու զա̈րկին, սպանեցին, իտոր խամար մկա ջա̈նդկներ մնացե էնտեխ:

Լաճն ի կավատա Քոչարի ասածին, կէրթա̈ն-կէրթա̈ն իրիյվան թաւրաֆն ի գյեո մութն ինգյե էսա լաճն ի զարմանց մեյ խատ ճոչ ճըճան ծառմ կտիսնա, ընկուն որ մարթ որ կիրիշկա կզա̈խմա̈խորի էտա ծառից:

Քոչարն ի կիմնա էտա ի՞նչ ծառ ի, զաթի հա̈մա̈ն կիմնա̈, թե էսա լաճ կվա̈խենա, ճա̈նպա̈խ քիչմ կշեղի, կէրթա̈ էն յանից կէրթա̈ն, կէրթա̈ն մեկ հէրիմ մեչ էլմ էլ կելեր կընցուցեն:

Քոչարն ի խետ ուր աղին խաց պա̈ն կուտին, աղին կպառկցուցի, խորոտմ կծածկի, կքյնցուցի, ինքյ կէլնի տյուս կէրթա̈ էն ծառի մոտ, որ ուր աղեն տեսեր էր, կէրթա̈ էտա ծառի մոտ կտիսնա. որ ի՞նչ, խազար խազարավոր տեղի բեռլեռճ մեչ էտա ծառին: Կմտնին մեչ էտա ծառին. վիր որ կըծեն. ծեռաց ծեռ կթմբրցուցեն:

Քոչարն ի խետ կտիսնա էսա պա̈ն, կպերի բարյութ կլցի ծառի գյեոգյի տակ՝ կրակ կուտա, ինե էտա ծառ կվառի, կանի մոխիր կթողնի դա̈: Ընկուն կանի, որ էլ տեխ չէրևա էտա տեխի բեռլեռճներն էլ մեչ, մենակ նմշի խամար էտա բեռլեռճներաց իրեք-չորս խատ կպախի ուր մոտ, կասի՝ բուլգյի լազմ էկվ, կտա̈ռնա, կուգյա̈ մոտ ուր աղեն, էն էլ կպառկի կքյնի էլ ինչից կվա̈խենա̈. բեռլեռճներ խատուցե, ապահով ի մկա, կուգյա̈ կպառկի, կքնի չուր առատուն:

Առատուն որ կէլնեն վեր, էսա լաճ կիրիշկա կտեսնա էն իրիկվան ծառ, որ կէրևեր, էլ մկա չի էրևա, կտա̈ռնա էսա Քոչարին կասի. - Քոչա՛ր, իրիկուն էնա տեխ մեյ խատ ճոչ ծառմ կեր, մարթ որ իրիշկեր՝ կվա̈խմա̈խորեր, մկա տեո՞ր ի, ի՞նչխ էլավ:

Էսա Քոչարն ի կասի. - Ի՞նչ ծառ, ի՞նչ պա̈ն, - կասի, - ո՞րտեխ ծառ կեր:

Լաճն ի կասի. - Ա՛յ էնատեղ, մեյ խատ ճոչ ծառմ կեր, իրիկուն որ ընցանքյ:

Քոչարն ի ուր աղին կխապի, կասի. - Չէ՛, աղա, էտասկընա պա̈ն չէյե, էսատեղ քո աչից ընկուն ի էրևացե:

Լաճն ինա̈ն Քոչարն ի կէլնին կինին ճա̈նպա̈խ, կէրթա̈ն, կէրթա̈ն, աստված կիտի ի՞նչ կա̈տա̈ր կէրթա̈ն, կէրթա̈ն կխասնեն մեյ խատ քյաղքյիմ, ցերեկ ժամանանց կիրիշկան, կտեսնան, որ մեյ խատ ճոչ քյաղաքյ մի, հա̈մա̈ն իրիկուն որ կմոտոխասնան, կիշեր կինի, քյադքյի տռնից որ կմտնեն ներս, կտեսնան, որ զա̈ չկա, չորս տեղ բիթյուն տառտակ ի, նա̈՛ մարթ կա, նա̈՛ ճրաքյ կա, իսկի մեյ

պան էլ չկա. կտիսնան քյաղքյի տյուգյեյտանք բիթյուն պաց ին, ինչ որ աստված ստեղծե կա. բիթյուն ուրենց տեխ, ճաման մարթ չէրևա, նա՛ ճրագյ, նա՛ պան:

Քոչարն ի կմտնի քյաղաքյ, կէրթա կէրթա կտիսնա. որ մեյ խատ տան մեչ պստիկ ճրագյմ կէրևա: Կէրթա կմոտոխասնա. կտիսնա. որ մեյ խատ ախչիյմ նստե պստիկ էօդի մեչ թա՛թ կանի, Քոչար որ էսա ախչկան կտիսնա. ճամա՛ն տուո կպանծ. կմտնի ներս:

Էսա ախչիյն ի խետ կտիսնա էսա լաճուն կասի. - Ա՛յ մարթ, տյու ի՞նչխ ես իկե էսա տեղ, որ մարթ, խողածին չի կանա:

Քոչարն ի կասի. - Էսա ի՞նչ էլեր ի էսա քյաղաքյ:

Ախչիկն ի կասի. - Կիտես ինչ էլե, էսա քյաղքյին յոթ վիշապ իկեր ին ինչ կճնդճր որ մարթ կա, պոներ ին խճեր ին: Էնա տեղ ճէրմ կա, ինոր մեչ զմեն օր եոսուն խատ, քառսուն խատ կէրթան կխանին կպերին կուտին: Էսա քյաղաքյն էլ էսասկընա թողեր ին մշամոր:

Քոչարն ի իրիկուն կաչկի վեր տռան խետ որ էսա վիշապներ կմտնեն տուն, կզճնի յոթի գյլեոխն էլ կկտրի կթճլի էնտեխ. կէրթա էտա ճէրի տուռըն էլ կպճնա, ինչ կճնդճր, որ մարթ կա կխանի տխւս:

Էսա երկրի թակավոր կպռնի ուր ախչիկ կուտա էսա լաճուն: